ՀՈԳԵՇՆՈՐՀ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՍ ԱՆԹԱԲՅԱՆ

Մեսրոպ աբեղա Անթաբյանը, ավագանի անունով Փայլակ, ծընվել է 1929 թվականին հերոսական և պատմական Մուսա լեռան տասնյակ հայ գյուղերից Վագրֆ գյուղում, բարի և հավատացյալ գյուղացու ընտանիքում։ Փայլակի մանկությունն անցել է ծննդավայրի հարազատ բնության գրկում մինչև 1939 թիվը, երբ Մուսա լեռան ամբողջ հայությունը, հարկադրաբար լքելով տուն ու հող, հեռացավ հայրենի իր օջախներից և իրը գաղթական ապաստան գտավ հյուրընկալ Սիրիայում և Լիբանանում։ Գաղթողների թվումն էին նաև Փայլակի ծնողները, որոնք իրենց հայրենակիցների մի մեծ մասի հետ հաստատվեցին Այն-էլ-Ճարում (Լիբանան)։ Պատանի Փայլակն իր նախակրթությունն ստացավ Այն-էլ-Ճարի դպրոցում, որն ավարտեց փայլուն հաջողությամբ 1944 թվին, և նույն տարվա հոկտեմբերին ընդունվեց Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը։ Ուսումնասեր, ուշիմ և ազնիվ պատանու առաջ բացվում են հայ մշակույթի, լեզվի, գիտության, զարգացման դռները։ Փայլակն իր հեղահամբույր բնավորությամբ; օրինակելի վարք ու բարքով և ջանասիրությամբ իր վրա է հրավիրում վարժարանի տեսչության, դասախոսական կազմի ուշադրությունը և իր ընկերների համակրանքը։ 1947 թվին նա մեծ հաջողությամբ ավարտում է Ժառանգավորաց վարժարանի դասարանական բաժինն ու նույն տարվա աշնանը ծնողների հետ ներգաղթում է Հայրենիք և ընդունվում Հոգևոր Ճեմարան։

1951 թվին, զինված կայուն և խոր գիտելիքներով, նա ավարտում է Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժինը, իրրև ավարտական ներկայացնելով «Ներսես Շնորհալին որպես գրական դեմք» աշխատությունը, որն արժանանում է գերազանց գնահատականի։ Նույն տարվա նոյեմբեր ամսին ձեռնադրվում է սարկավագ։

Փայլակ սարկավագը ուսանողական գրասենյակներից աշխատակցել է «Էջմիածին» ամսագրին անկեղծ և անմիջական հայրենաշունչ բանաստեղծություններով և այլ հոդվածներով։

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, 1956 թվի հունվարի 22-ին Փայլակ սարկավագը ձեռնադրվում է կուսակրոն քահանա և վերանվանվում Տ. Մեսրոպ։

Վեհափառի հրամանով Տ. Մեսրոպ աբեղան նշանակվել է Հոգևոր Ճեմարանի վերակացու և «Էջմիածին» ամսագրի խմբագրության աշխատակից։